Նախագիծ 46

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1522-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

........ դեկտեմբերի 2010 թվականի N ...Ն

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասին և "Իրավաբանական ակտերի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. "Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածում կատարել վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 24-ի "Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների և Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեում վերաբաշխում կատարելու մասին" N 1522-Ն որոշման N 5 հավելվածում կատարել փոփոխություններ համաձայն հավելվածի:

2. Էլեկտրոնային մրցույթների համակարգի ներդրման համար անհրաժեշտ ապարատային սարքավորումների ձեռքբերման նպատակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին 2010 թվականի IV-րդ եռամսյակում հատկացնել 35375.0 հազար դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Վարչական սարքավորումներ» հոդվածով):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ
Տ. Սարգսյան

Տ.Տ.

Հավելված

Աղյուսակ 1

ՀՀ կառավարության 2010 թվականի
դեկտեմբերի ....-ի N ...-Ն որոշման

“ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԱՍԻՆ” ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ N 1 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1522-Ն ՈՐՈՇՄԱՆ N 5 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| Բաժինը | Խումբը | Դասը | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի, տնտեսագիտական դասակարգման հոդվածների, ֆինանսավորվող ծրագրերի և դրանք իրականացնող մարմինների անվանումները | Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)<br>տարի |
|---|---|---|---|---|
| | | | ԸՆԴԱՄԵՆԸ՝ ԾԱԽՍԵՐ | - |
| | | | այդ թվում՝ | |
| 01 | | | ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | (35,375.0) |
| | | | այդ թվում՝ | |
| | 01 | | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում, ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ, արտաքին հարաբերություններ | (35,375.0) |
| | | | այդ թվում | |
| | | 02 | Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ | (35,375.0) |
| | | | այդ թվում | |
| | | | 06. ՀՀ գանձապետական համակարգի վճարահաշվարկային սպասարկման ծախսեր | (35,375.0) |
| | | | այդ թվում | |
| | | | ՀՀ ֆինանսների նախարարություն | (35,375.0) |
| | | | որից՝ | |
| | | | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների “Գործառնական և բանկային ծառայությունների ծախսեր” | (35,375.0) |
| 11 | | | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ | 35,375.0 |
| | | | այդ թվում՝ | |
| | 01 | | ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ | 35,375.0 |
| | | | այդ թվում՝ | |
| | | 01 | ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ | 35,375.0 |
| | | | 01 ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ | 35,375.0 |
| | | | ՀՀ կառավարություն | 35,375.0 |
| | | | Պահուստային միջոցներ | 35,375.0 |

Աղյուսակ 2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N 1522-Ն ՈՐՈՇՄԱՆ N 13 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

| Գնման առարկայի | | | | Պայմանագրերի | | Գումարի փոփոխությունը /հազ. դրամ/ (ավելացումները նշված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում) |
|---|---|---|---|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը | գնման ձևը | կնքման ժամկետը | կատարման վերջնական ժամկետը | |
| ՀՀ ֆինանսների նախարարություն | | | | | | |
| Բաժին N 01 | Խումբ N 01 | Դաս N 02 | Ֆինանսական և հարկաբյուջետային հարաբերություններ | | | (35,375.0) |
| ՀՀ գանձապետական համակարգի վճարահաշվարկային սպասարկման ծախսեր | | | | | | |
| Ֆինանսական և ֆիսկալ գործունեության բնագավառում ծառայություններ | Դրամ | 81,354,000.0 | ՄԱ | հունվար | դեկտեմբեր | (35,375.0) |
| Բաժին N 11 | Խումբ N 01 | Դաս N 01 | ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ | | | 35,375.0 |
| ՄԱՍ II ԱՊՐԱՆՔՆԵՐ | | | | | | 35,375.0 |
| Սերվեր | հատ | 1 | ՄԲԱ | դեկտեմբեր | 2011 թվականի փետրվար | 2390.0 |
| Սերվեր | հատ | 2 | ՄԲԱ | դեկտեմբեր | 2011 թվականի փետրվար | 6690.0 |
| Սերվեր | հատ | 2 | ՄԲԱ | դեկտեմբեր | 2011 թվականի փետրվար | 1560.0 |
| Տվյալների պահպանման համակարգ | հատ | 1 | ՄԲԱ | դեկտեմբեր | 2011 թվականի փետրվար | 7000.0 |
| Սերվերային պահարան | հատ | 1 | ՄԲԱ | դեկտեմբեր | 2011 թվականի փետրվար | 2465.0 |
| Կոմուտատոր | հատ | 2 | ՄԲԱ | դեկտեմբեր | 2011 թվականի փետրվար | 2185.0 |
| Երթուղիչ | հատ | 2 | ՄԲԱ | դեկտեմբեր | 2011 թվականի փետրվար | 6120.0 |
| Երթուղիչ | հատ | 1 | ՄԲԱ | դեկտեմբեր | 2011 թվականի փետրվար | 1349.0 |
| Կոմուտատոր | հատ | 2 | ՄԲԱ | դեկտեմբեր | 2011 թվականի փետրվար | 896.0 |
| Անխափան սնուցման սարք | հատ | 1 | ՄԲԱ | դեկտեմբեր | 2011 թվականի փետրվար | 1500.0 |
| Օպերացիոն համակարգ | հատ | 3 | ՄԲԱ | դեկտեմբեր | 2011 թվականի փետրվար | 1350.0 |
| Օպերացիոն համակարգ | հատ | 2 | ՄԲԱ | դեկտեմբեր | 2011 թվականի փետրվար | 1870.0 |